

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի 2011թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վերլուծելով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի 2011 թվականի ֆինանսական տարվա գործունեության արդյունքները, անհրաժեշտ է նշել, որ տարին հաջող էր Բանկի գործունեության համար: Տարվա ընթացքում Բանկին հաջողվել է գերազանցել նախորդ տարիների իր եկամտաբերության ցուցանիշները՝ այդպիսով իսկ կարողանալով բավարարել իր բոլոր շահառուների սպասումները: Տարվա ընթացքում Բանկին հաջողվել է նաև զգալիորեն ավելացնել իր ակտիվների և պարտավորությունների ծավալները՝ հավատարիմ մնալով իր ռազմավարությանը և գերազանցելով բյուջեով նախապես պլանավորված ցուցանիշները:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը շարունակել է իր որդեգրած ռազմավարությունը դեպի ունիվերսալ և մանրածախ ֆինանսական կառույց ձևավորվելու ճանապարհին:

Արձանագրվել է Բանկի ակտիվների էական աճ, որը զուգորդվել է ակտիվների կազմում վարկային ներդրումների տեսակարար կշռի աճով: Նախորդ տարվա համեմատությամբ ակտիվներն աճել են 39.1%-ով՝ 62,949 մլն ՀՀ դրամից կազմելով 87,576 մլն ՀՀ դրամ: Տրամադրված վարկերի ծավալը դրամային արտահայտությամբ կազմել է 38,380 մլն ՀՀ դրամ և նախորդ տարվա համեմատ աճել 13,116 մլն ՀՀ դրամով կամ 52%-ով: 31.12.2011թ. դրությամբ Բանկի հաշվեկշռում Վարկային պորտֆելը կազմում է ակտիվների 43.8%-ը:

Հաշվետու ֆինանսական տարին արդյունավետ էր նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության առումով: Տարվա ընթացքում շարունակվել է համագործակցությունը Շվեյցարական Իզմիրյան հիմնադրամի, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի, ինչպես նաև՝ ՀՀ ԿԲ-ի միջոցով Գերմանահայկական հիմնադրամի միջոցներով տարբեր վարկային ծրագրերի իրականացման համար: Միաժամանակ Հայաստանում փոքր և միջին բիզնեսի ֆինանսավորման նպատակով՝ ստորագրվեց սինդիկացված վարկի պայմանագիր, որում ընդգրկված էին Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը (EBRD), ռուսական Պրոմսվյազբանկ ԲԲԸ-ն (OJSC Promsvyazbank), բելգիական ՎԴԿ Սպաարբանկը (VDK Spaarbank) և լիբանանյան Բիբլոս Բանկը (Byblos Bank S.A.L.):

Կրկնապատկվեց Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի կողմից ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ին Միջազգային Առևտրի Խթանման ծրագրի շրջանակում տրամադրված վարկի սահմանաչափը: Վերջինս պայմանավորված է նրանով, որ Բանկը ներմուծման գործարքների ֆինանսավորմանը գործում ցուցաբերում է ակտիվություն և կայուն դիրքեր է գրավում ՀՀ բանկային համակարգում:

Շարունակելով նախորդ տարի Հարավարևելյան Եվրոպական հիմնադրամի (EFSE) հետ սկսած համագործակցությունը Հայաստանում միկրո և փոքր բիզնեսի ֆինանսավորման բնագավառում, կնքվեց նոր 10 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր հիմնադրամի հետ:

Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ընդլայնմանը և միջազգային համագործակցության զարգացմանը նպաստել են Բանկի հիմնական ռազմավարական ցուցանիշների փոփոխությունները:

Հիմնական ռազմավարական ցուցանիշներ

Ցուցանիշի անվանումը	2010թ.	2011թ.	հազ. ՀՀ դրամ
			Աճ (+), նվազում (-)
Ակտիվներ	62,948,546	87,576,361	24,627,815
Հաճախորդներին տրված վարկեր	25,264,384	38,380,036	13,115,652
Պարտավորություններ	52,687,986	75,334,913	22,646,927
Կանոնադրական կապիտալ	5,962,005	5,962,005	-
Մասնաձյուղային ցանց, հատ	33	39	6
Բանկումատներ, հատ	42	58	16
Անձնակազմ, աշխատակից	391	473	82
Կորպորատիվ հաճախորդներ	1,716	2,040	324
Ֆիզիկական անձ հաճախորդներ	92,279	138,864	46,585
Պլաստիկ քարտեր	52,452	85,810	33,358

Հարկ է նաև նշել, որ 2011 թվականի վերջին ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ հաճախորդներից ներգրավված միջոցները կազմել են 54,977 մլն. ՀՀ դրամ, որը 2010թ. համեմատ աճել է 23.9%-ով:

2011 թվականի վերջին Բանկի ընդհանուր կապիտալը կազմել է 12,241 մլն. ՀՀ դրամ, որը 2010թ. համեմատ աճել է 19.3 %-ով:

Բանկի 2011թ.-ի ֆինանսական քաղաքականության գլխավոր խնդիրներից է եղել՝ հաշվի առնելով Բանկի գործունեության վրա ազդող հիմնական գործոնները, ներառյալ միջավայրի փոփոխությունները.

1. Պահպանել և ավելացնել Բանկի ընդհանուր կապիտալը.
2. Ապահովել Բանկի կայուն իրացվելիությունը՝ արդյունավետ կառավարելով բանկի ֆինանսական միջոցները.
3. Ապահովել շահույթի և շահութաբերության բավարար մակարդակ:

Հաշվետու ֆինանսական տարում Բանկի զուտ շահույթը կազմել է 2,214,409 հազ. ՀՀ դրամ: Ստացված արդյունքի հիման վրա հաշվարկված Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները հետևյալն են.

Ցուցանիշի անվանումը	2010թ.	2011թ.	Աճ (+), նվազում (-)
Զուտ շահույթ, հազ. ՀՀ դրամ	1,279,174	2,214,409	935,235
ROA (ակտիվների շահութաբերություն) %	3.0	2.9	0.1
ROE (կապիտալի շահութաբերություն) %	19.6	14.1	5.5
EPS – մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ, ՀՀ դրամ	1,857	1,122	735

Մինչև 2010թ. Բանկը շահութաբաժիններ չի վճարել և ստացված շահույթն ամբողջովին ուղղվել է Բանկի կապիտալիզացիային: 2011թ. առաջին անգամ վճարվել են շահութաբաժիններ 2010թ. շահույթից՝ զուտ շահույթի նկատմամբ 20%

դրույքաչափով: Շահութաբաժինների չափը դրամային արտահայտությամբ եղել է 248,491 հազ. ՀՀ դրամ և կազմել կանոնադրական կապիտալի 4.17%-ը:

Բանկում հաշվետու տարվա ընթացքում շարունակվել է ռիսկերի կառավարման ոլորտի բարեփոխումների և բարելավման ծրագիրը, որին ակտիվ մասնակցություն են ունեցել Բանկի հետ համագործակցող մի շարք միջազգային խորհրդատվական ընկերություններ:

Բանկի ինստիտուցիոնալ զարգացման ծրագիր իրականացնող կանադական CRC Sogema ընկերության հետ համագործակցության շրջանակներում փորձագիտական գնահատականի են ենթարկվել ռիսկերի կառավարմանն առնչվող ընթացակարգերը, Բանկում օգտագործվող մեթոդաբանությունը և մոդելները:

Ռիսկերի կառավարում

Հաշվետու տարվա ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ բիզնես գործառնությունների և հիմնական ֆինանսական ցուցանիշների կտրուկ աճն ուղղորդվել է ռիսկերի կառավարման ընթացակարգերի խստիվ պահպանմամբ, նոր ընթացակարգերի ներդրմամբ և անընդհատ կատարելագործմամբ: Բանկում ռիսկերի կառավարման տեսանկյունից հիմնային են եղել պոտենցիալ ռիսկերի արագ բացահայտումը, կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկումը՝ դրանց հնարավոր հետևանքները գնահատելու, չեզոքացնելու կամ հնարավորինս մեղմացնելու միջոցով:

Վարկային ռիսկ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ պատասխանատու գործընկեր հանդիսանալու փաստն առաջին հերթին պայմանավորված է վարկային ռիսկը հնարավորինս արդյունավետ գնահատելու, վերահսկելու, կառավարելու և նվազագույնի հասցնելու Բանկի կարողությամբ: Բանկում ներկայումս կիրառական են պոտենցիալ վարկառուի սնանկության հավանականության հաշվարկի, պոտենցիալ վարկառուի բավարարման, հաճախորդի կառավարման որակի գնահատման, ինչպես նաև վարկառուի ռիսկի գնահատման (BRR) և վարկառուի ապահովվածության որակի գնահատման (FRR) հաշվարկման մոդելները, որոնց կիրառումը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր վարկառուի համար սահմանել համապատասխան տոկոսադրույք՝ ըստ վարկունակության և վարկի ապահովվածության աստիճանի: Վարկային ռիսկի գնահատմանն ուղղված միջազգային պրակտիկայում կիրառվող արդիական նոր մոդելների մշակումը, ներդրումը և կատարելագործումն անընդհատ բնույթ են կրել հաշվետու տարվա ընթացքում:

Իրացվելիության ռիսկ

Ռիսկի կառավարման կարևորագույն տարր է հանդիսանում Կենտրոնական բանկի կողմից սահմանված իրացվելիության նորմատիվների պահանջի պարտադիր կատարումը: Ընթացիկ իրացվելիության ռիսկի կառավարման ընթացքում դիտարկվում են օրական, շաբաթական և ամսական կտրվածքով փաստացի և կանխատեսվող ցուցանիշների շարժերը: Իրացվելիության ռիսկի վերահսկողության և գնահատման նպատակով Բանկը պարբերաբար անց է կացնում սթրես թեստեր և իրավիճակային վերլուծություններ, որոնց ժամանակ դիտարկվում են ժամկետային և ցպահանջ միջոցների արտահոսքի, գործնական միջավայրի փոփոխության հնարավոր դեպքերը, կամ էլ ռիսկի գնահատման համապատասխան մոդելի որևէ պարամետրի փոփոխության հնարավոր հետևանքները:

Տոկոսադրույքների ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխման ռիսկը գնահատելու և վերահսկելու տեսանկյունից առաջնային է հանդիսանում ակտիվների և պասիվների կառավարման գործընթացի ճիշտ կազմակերպումը: Այս դեպքում գործառնությունների կազմակերպումը և վերահսկողությունն իրականացվում է այնպես, որ տոկոսադրույքների նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների տեղաբաշխման արդյունքում տոկոսային մարժան մնա Բանկի համար ընդունելի սահմանված միջակայքերում:

Արտարժութային ռիսկ

Բանկն արտարժութային ռիսկը վերահսկում է արտարժութային դիրքի կառավարելիության ապահովման միջոցով: Ռիսկը նվազեցնելու կամ չեզոքացնելու նպատակով կատարվում է արտարժութային ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքի վերլուծություն, կիրառվում են հեջավորման և այլ գործիքներ: Արտարժութային ռիսկի կառավարումն իրականացվում է արտարժույթի ընդհանուր բաց դիրքի և առանձին արժույթների համար բաց դիրքերի սահմանաչափերի սահմանման, դրանց միջակայքի պահպանման և ժամանակի իրական ռեժիմով հսկողության իրականացման միջոցով:

Գործառնական ռիսկ

Բանկում գործառնական ռիսկի կառավարման հիմնական գործիքներն են հանդիսանում Բանկի ներքին նորմատիվային ակտերը և ներքին հսկողության համակարգերը: Ներքին նորմատիվ ակտերում սահմանված են Բանկում իրականացվող գործառնությունների հստակ կարգերը: Գործառնական ռիսկը նվազագույնի է հասցվում նաև աշխատակիցների արհեստավարժության, մասնագիտական որակավորման և մասնագիտական պատրաստվածությունը բարձրացնելուն ուղղված սեմինարներ, դասընթացներ կազմակերպելու, յուրաքանչյուր կատարողի լիազորությունների և պարտականությունների հստակ ցանկը սահմանելու շնորհիվ: Հստակ սահմանվում են առանձին գործառնությունների ներքին մոնիտորինգի, հսկողության և վերահսկողության գործելակարգերը, անընդհատ աշխատանքներ են տարվում տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգերի աշխատանքի կատարելիությունն ապահովելու համար, իրականացվում է գույքի և ռազմավարական նշանակություն ունեցող ակտիվների ապահովագրում:

ԱՐԱՐԱՐՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի անդամներ՝

Է. Ստեփանյան



Ա. Սուվարյան

